

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 27/1

7 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Ջի էյջ Սթորիջ Էնթերփրայզս» ՍՊԸ 10.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 17.09.2014 թ-ի թիվ 2018 որոշումը մասնակի չեղյալ համարելու վերաբերյալ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետը, քննարկելով «Ջի էյջ Սթորիջ Էնթերփրայզս» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 17.09.2014 թ-ին ընդունել է թիվ 2018 որոշումը՝ ընկերությունից 100.608.015 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

«Ջի էյջ Սթորիջ Էնթերփրայզս» ՍՊԸ ներկայացուցչի կողմից Հանձնաժողովին է ներկայացվել գանգատ՝ ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 17.09.2014 թ-ի թիվ 2018 որոշումը մասնակի չեղյալ համարելու վերաբերյալ: Այնուհետև, ընկերության ներկայացուցչի կողմից Հանձնաժողովի նախագահին հասցեագրված 04.11.2014 թ-ի գրությամբ ներկայացվել է միջնորդություն՝ ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 17.09.2014 թ-ի թիվ 2018 որոշումը մասնակի չեղյալ համարելու վերաբերյալ 10.10.2014 թ-ին բերված գանգատն առանց քննության թողնելու վերաբերյալ:

Վերոգրյալի վերաբերյալ հարկ է նշել, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝

բ) դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից.»:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ «Ջի էյջ Սթորիջ Էնթերփրայզս» ՍՊԸ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝

«Ջի էյջ Սթորիջ Էնթերփրայզս» ՍՊԸ 10.10.2014 թ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝

